



Այսօր՝ հունիսի 31-ին Մեծ Այրում համայնքի դպրոցում տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցում էին՝ դպրոցի աշակերտական խորհուրդը, համայնքի սոցիալական աշխատող՝ Տարոն Գրիգորյանը, դպրոցի տնօրեն՝ Սոֆիա Այվազյանը և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի տնօրեն՝ Օլեգ Դուլգարյանը, քննարկման ժամանակ քննարկվեց Մեծ Այրում համայնքի դպրոցի գրադարանում տեղեկատվական կետի ստեղծման ծրագիրը:

Դեռևս 2013թ. դեկտեմբերին Մեծ Այրում համայնքի դպրոցում «Քաղաքացիական ձայն և գործողություն» իրականացված խմբային քննարկումների ժամանակ, աշակերտները բարձրաձայնեցին գրադարանում տեղեկատվական կետի ստեղծման խնդիրը: Այնույնտև աշակերտները այս հարցի համար ակտիվ խմբի հետ փորձել են իրականացնել ֆոնդհայթայթման աշխատանքներ տեղեկատվական կետի ծրագիր ստեղծելու համար:

2014թ. հունիսին աշակերտական խորհուրդը դպրոցի տնօրինության և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ ձեռք բերեցին պայմանավորվածություն տեղեկատվական կետի ծրագրի իրականացման համար:

Անհրաժեշտ սարքավորումները՝ համակարգիչ, տպող-պատճենահանող սարքավորումը կտրամադվի «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից, դպրոցն էլ իր հերթին կապահովի գրադարանը ինտերնետային կապով, ինչպես նաև այսօր աշակերտները քննարկեցին էլեկտրոնային գրադարան ստեղծելու գաղափարը:

Դպրոցի գրադարաններում տեղեկատվական կետի ստեղծման ծրագիր է իրականացվում նաև Զիլիզա և Քարինջ համայնքների միջնակարգ դպրոցներում:

Դպրոցի գրադարաններում հագեցվածության ծրագիրը իրականացվում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Համայնքային աջակցության

ծրագրի» շրջանակներում «Վորլդ Վիժն Հայաստան»-ի ֆինանսական օժանդակությամբ: